https://www.nytimes.com/2020/10/10/world/europe/armenia-azerbaijan-nagorno-karabakh.html/#:~:text=the%20main%20story-,Fierce%20Fighting%20Eases%20After%20Cease%2DFire%20Between%20Armenia%20and%20Azerbaijan,line%20was%20%E2%80%9Crelatively%20calm.%E2%80%9D&text=GORIS%2C%20Armenia%20%E2%80%94%20Fierce%20fighting%20over,a%20cease%2Dfire%20took%20effect.

Fighting Eases, Briefly, After Cease-Fire Between Armenia and Azerbaijan

Հակիրճ՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև հրադադարից հետո հաստատված «խաղաղության» մասին

ՀՀ Պաշտպանության նախարարության խոսքով՝ առաջնագծի մեծ մասը «համեմատաբար հանգիստ էր»: Սակայն գիշերը վերսկսվել է ռմբակոծությունը:

Գորիս, Հայաստան - Ադրբեջանից անջատված հայկական տարածաշրջանում ընթացող կատաղի մարտերը մասամբ հանդարտվեցին՝ հրադադարի ուժի մեջ մտնելուց հետո: Հույս գրեթե չկար 2 շաբաթ ամենադաժան հակամարտության մեջ գտնվող անկայուն տարածաշրջանում խաղաղության հաստատմանը: Մի տարածաշրջանում՝ որն այն տեսել է տասնամյակներ շարունակ:

Հրադադարի մասին համաձայնագիրը, որը կնքվել է Մոսկվայում Հայաստանի և Ադրբեջանի միջև տասը ժամ տևած բանակցություններից հետո՝ հույս է հայտնել կարճ ժամանակով դադարեցնել հրետանային ռմբակոծությունը, անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) հարվածներն ու խրամատային պատերազմը, որոնք հարյուրավոր զոհերի պատճառ են դարձել սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի հարձակումից հետո:

Շաբաթ օրը՝ կեսօրին, հրադարի ուժի մեջ մտնելուց հետո կողմերից յուրաքանչյուրը մեղադրեց մյուսին նոր զրոհներ կազմակերպելու մեջ: Սակայն ականատեսների խոսքով, կեսօրին և երեկոյան տարածաշրջանի մայրաքաղաք Ստեփանակերտում ռմբակոծություններ չեն եղել և ինչպես հայտնել է ՀՀ ՊՆ-ը առաջնագծի մեծ մասը «համեմատաբար հանգիստ էր»:

Սակայն կեսգիշերից քիչ անց Ստեփանակերտում մարդկանց խոսքով մի շարք պայթյուններ ու օդային հարձակումների ազդանշաններ են լսվել, որոնք ենթադրում են, որ հրադադարի ռեժիմը ուժի մեջ է մտել հաստատվելուց 12 ժամ անց միայն: Միևնույն ժամանակ Ադրբեջանի ՊՆ-ը հայտնեց, որ տարածաշրջանի սահմանի մոտակայքում գտնվող ադրբեջանական Տերտեր քաղաքը ենթարվել է հարձակման:

Ավելի վաղ Կարմիր Խաչի Կոմիտեն հայտարարել էր, որ պատրաստ է օգտագործել հրադադարն ու հետ բերել զահվածների դիերն առաջնագծից, որտեղ ԼՂ-ի տարածաշրջանը սահմանագիծ է ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող տարածքին: Արտակարգ Իրավիճակների Նախարարության (ԱԻՆ) աշխատակիցները որոնում են չպայթած զենքերը:

Մոտ 150,000 բնակչություն ունեցող Լեռնային Ղարաբաղը դեպի ծով ելք չունեցող տարածք է Կովկասում. լեռնաշղթա՝ որտեղ Եվրոպան միանում է Ասիային, Սև ծովի և Կասպից ծովի միջև: Քոնեքթիքութից փոքր տարածքը ունի փոքր աշխարհառազմավարական նշանակություն, բայց տարածաշրջանային տերությունների շրջանում ուժգնության սրման փորձության առարկա է:

Ռուսաստանը, Իրանը և չափազանց պնդաճակատ Թուրքիան խաղում էին տարածաշրջանում իրենց ազդեցության համար:

«Հուսով եմ, որ աշխարհի ուժային կենտրոնները կգտնեն Ադրբեջանի վրա ազդեցության բավարար միջոցներ, որպեսզի նա հավատարիմ մնա հրադադարին», - ասաց պարոն Բաղդասարյանը:

Տարածաշրջանը միջազգային մասշտաբով Ադրբեջանի մաս է կազմում, բայց վերահսկվում է անջատ կառավարության կողմից, որը սերտորեն կապված է Հայաստանի հետ 1990-ականների սկզբին տարածքի շուրջ տարիների պատերազմից հետո: Մոտ 20,000 մարդ զոհվեց, և շուրջ միլիոնը ,հիմնականում ադրբեջանցիներ, տեղահանվեցին այդ պատերազմում:

Ադրբեջանն ասում է, որ այժմ պայքարում է այն երկիրը հետ վերցնելու համար, որն իրավամբ պատկանում է իրեն, իսկ Հայաստանն ասում է, որ հողը Ադրբեջանին հանձնելը կարող է հանգեցնել Լեռնային Ղարաբաղում հայ բնակչության ոչնչացմանը:

Կողմերից ոչ մեկը կարծես թե չի գնում փոխզիջումների, բոլոր կուսակցությունների հռետորաբանությունը վերջին տարիներին ավելի է խստացել: Ներկայիս պատերազմն արդեն

սպանել է ավելի քան 400 հայ զինծառայող, իսկ ՄԱԿ-ի տվյալներով՝ ավելի քան 50 խաղաղ բնակիչ: Ադրբեջանը չի հայտնում իր ռազմական կորուստների մասին:

«Այս պատերազմն այստեղ ոչ ոքի չի զարմացրել: Այն ոչ ոքի մոտ կասկած չի հարուցել, թե ինչու է հիմա տեղի ունենում»,- ասել է Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում տեղակայված Միջազգային Ճգնաժամային Խմբի վերլուծաբան Զաուր Շիրիևը:

Պարոն Շիրիևի խոսքերով, ինքն էլ չի ակնկալում, որ հրադադարը երկար կտևի, մասամբ այն պատճառով, որ շաբաթ օրը վաղ առավոտյան Մոսկվայում հայտարարված համաձայնագիրը չի պատունակում աշխարհագրության և ժամանակի հստակեցում:

«Այն կարող է դադարել գործել ցանկացած պահի»,- ասաց նա:

ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան տարածաշրջանում Ադրբեջանի գլխավոր դաշնակիցն է: Այժմ այն մարտահրավեր է նետում Ռուսաստանի երկարամյա աշխարհաքաղաքական առաջնորդությանը Հարավային Կովկասում, որը Խորհրդային Միության մաս էր կազմում:

Ռուսաստանը երկկողմ պաշտպանության պայմանագիր ունի Հայաստանի հետ, որտեղ ունի իր ռազմակայանը, չնայած դրան նա սերտ կապեր է պահում Ադրբեջանի հետ:

Տարածաշրջանի հարավային հարևան Իրանը, նույնպես հանդիսանում է կարևոր դերակատար: Վերջինիս նախագահ Հասան Ռոհանին շաբաթ օրը հեռախոսազրույց է ունեցել ՌԴ նախագահ Վ. Պուտինի հետ՝ քննարկելու հակամարտությունը:

Լինի դա Ռուսաստանի կողմից միջնորդավորված հրադադարի ռեժիմ, թե ոչ, Պուտինը կփորձի իր երկրի հետխորհրդային հարևանների հետ կատարվող իրադարձությունների վրա ազդելու ունակությունը:

Ադրբեջանը պնդում է, որ եթե Հայաստանը ցանկանում է խաղաղություն, ապա պետք է իր զորքերը դուրս բերի ԼՂ-ից: Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը շաբաթ օրը նախազգուշացրեց, որ երկիրը պատրաստ է շարունակել մարտերը, իսկ Թուրքիան ասաց, որ պատերազմի դաշտում և բանակցությունների սեղանի շուրջ կկանգնի իր «եղբայր Ադրբեջանի կողքին»:

«Ադրբեջանը ցույց տվեց Հայաստանին և ամբողջ աշխարհին, որ ունի ունակություն և ինքնավստահություն՝ վերադարձնելու մոտ 30 տարի գրավված իր տարածքները»,- շաբաթ

օրը հայտարարել է Թուրքիայի արտգործնախարարությունը։ «Ադրբեջանը Հայաստանին վերջին հնարավորությունը տվեց դուրս գալ իր գրաված տարածքներից»,- համաձայնություն տալով զինադադարին ասել է նախարարությունը։

Թարգմանությունը՝ Անժելա Գասպարյանի, Անի Մարգարյանի

Ղեկավար՝ Արմենուհի Ավագյան